ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3499-Ա « 28 » օգոստոսի 2025թ.

ԷՐԵԲՈՒՆԻ ԵՐԵՎԱՆ 2800-ԱՄՅԱԿԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 1.2-րդ ենթակետով և 12.7-րդ, 12.10-րդ կետերով.

1. Փրկարարի օրվա կապակցությամբ, Երևան համայնքին մատուցած ծառայությունների համար Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով պարգևատրել.

1) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի վարչության պետի պաշտոնակատար, փրկարար ծառայության գնդապետ Զավեն Մելքոնյանին.

2) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի վարչության պետի տեղակալ, փրկարար ծառայության գնդապետ Ահարոն Ղազարյանին.

3) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի վարչության 10-րդ հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փրկարար ծառայության փոխգնդապետ Արտավազդ Գրիգորյանին.

4) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի վարչության 10-րդ հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փրկարար ծառայության մայոր Արսեն Գևորգյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ